Հետազոտականաշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցայինդպրոց»կրթականի իմնադրամ ՎահրամՍողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտությանթեմա	Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորումը աշխարհագրության դասերին միջին դպրոցում:
Ուսուցչիտվյալներ • Անուն, ազգանուն,հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ.հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	ՄամիկոնԿիրակոսյան Բաբկենի Աշխարհագրությանուսուցիչ 093 95-02-61 mamikonkirakosyan4@gmail.com Աշխարհագրություն,հասարակագիտության 6-9
Ուսումնական հաստատությանտվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ.հասցե (տնօրենության) • Webկայքիհասցե	Լանջառի հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն	**3**
Հիմնականբովանդակություն	**5**
Եզրակացություններ,առաջարկություններ	**21**
Օգտագործվածգրականությանցանկ	**24**
Հավելվածներ	**25**

Ներածություն

Նպատակը և հետազոտականհարցը	Հետազոտության նպատակն է բնության նկատմամբ արժեքային ճիշտ կողմնորոշումների բնապահպանական ընդունակությունների, պատասխանատու վերաբերմունքի, բնության մեջ ճիշտ վարքագծի,ունակությունների դրսևորումը և էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը աշխարհագրության դասին: Հետազոտության նպատակով պայմանավորված ՝ առաջ են գալիս հետևյալ խնդիրները. 1. Ուսումնասիրել բնապահպանական խնդիրները և նրանց ուսուցումը դպրոցում: 2. Ուսումնասիրել էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես անձի ձևավորման և զարգացման անհրաժեշտ բաղադրամաս: 3. Գտնել ուղիներ, միջոցներ, մեթոդներ, որոնք ավելի կբարելավեն բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորումը աշխարհագրության դասին:

Ներածություն

Հետազոտության արդիականություն	Բնապահպանական դաժան աղետների ներկա պայմաններում շատ կարևոր է դառնում մարդու բարոյական, էկոլոգիական կրթության առաջխաղացումը, որի հիմքն առաջին հերթին դառնում է մարդու և մարդու, մարդու և բնության միջև առկա փոխհարաբերությունների սկզբունքների մշակումը:Մեր օրերում գերնպատակ է սովորողների մեջ ձևավորել բնապահպանական գիտակցության և մտածելակերպ:: Հարկավոր է, որ յուրաքանչյուր անհատի մեջ ձևավորվի բնության նկատմամբ պատասխանատվություն: Պետք է գիտակցական այն մակարդակին հասնել, որ յուրաքանչյուր ոք գիտակցի, ոդ մարդը ինչպես բնության օգտագործողն է, այնպես էլ դա պահպանողը: ՀԱՐՑ–Ինչպես ձևավորել հոգատար վերաբերմունք բնության հանդեպ աշխարհագրության դասերին միջին դպրոցում Լանջառի հիմնական դպրոցի օրինակով

ԳԼՈՒԽ I
ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս աշխարհը մենք չենք ստեղծել, սակայն այդ աշխարհում ապրողները մենք ենք…

Ժողովրդական իմաստություն

Աշխարհի նկատմամբ բնապահպանական վերաբերմունքը ձևավորվում և զարգանում է մարդու ամբողջ կյանքի ընթացքում: Բնության և առհասարակ շրջակա միջավայրի հետ համերաշխության ու ներդաշնակության մեջ ապրելու կարողության մշակումը հարկավոր է սկսել մանկությունից:Ասել է թե՝ հարկավոր է երեխային դեռ մանկուց տալ էկոլոգիական դաստիարակություն: Էկոլոգիական դաստիարակությունը անհատի կրթության, դաստիարակության և զարգացման անընդմեջ, բազմակողմանի և պարտադիր իրականացվող գործընթաց է ՝ նպատակաուղղված շրջակա միջավայրի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, ինչպես նաև արժեքային համակարգի և վարքագծի

կողմնորոշմանն ու էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:

Այսպիսով՝ բնության պահպանությանը նաև մասնակցում են դպրոցականները:Եթե ուզում եք, որ մեր մոլորակը և ժողովուրդները գոյատևեն, ապա յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր դեռահաս, պատանի, երիտասարդ շրջակա միջավայրի պահպանությունը պիտի դարձնի իր սուրբ պարտականությունը:Էկոլոգիական մշակույթի մակարդակը հասարակության զարգացման չափանիշներից մեկն է, ցուցանիշ, թե որքանո՞վ է մարդկությունը պատրաստ զոհաբերել իր հետաքրքրությունները հանուն եկող սերնդի. Այս միտքը պետք է սերմանել սովորողների մեջ, որպեսզի նրանք լինեն նախաձեռնող, ինքնուրույն գտնեն առավելագույն հավասարակշռություն ապահովող տարբերակներ:Այսօր, առավել քան երբևէ, մարդկությանը անհրաժեշտ է ազատագրվել բնության ուժերի դեմ պայքարողի՝ բնության տիրակալի բարդույթից:

Հայտնի է, որ իսկական գեղեցկությունը թաքնված է բնության մեջ: Միայն անհրաժեշտ է օգնել աշակերտներին տեսնելու և գնահատելու այն:Բնությունը մարդուն հարստացնում է հոգեպես: Նրա հետ շփումը նպաստում է

Դպրոցականի էկոլոգիապես կուլտուրական անձի մոդուլը

Անձնային որակները	Վարքը՝ բնության մեջ	Գործունեությունը

բարոյական դրական որակների ձևավորմանը:

Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի, էկոլոգիական աղետների վիճակից դուրս գալու առաջին պայմանը սովորողների մոտ բնության անաչառության վերաբերյալ ունեցած պատկերացման և բնությունը, որպես զուտ կենսապահովման միջոց դիտարկելու արժեքային կողմնորոշման վերափոխումն է: Այսօր ընտանիքի, դպրոցների խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելով և լրիվ կախված է նրանից ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, համաչափությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանք գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկն է և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որը տիրում է բնության մեջ: Շրջակա միջավայրը բոլոր մարդկանց հոգածության առարկան պետք է լինի, և նրա բարեհաջող վերականգման համար բոլորը անձնական պատասխանատվություն են կրում:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում՝

1. Երբ մարդը բնությունից կորզում և օգտագործում է ոչ այնքան, որքան կարելի է, և ոչ այնտեղ, որտեղ կարելի է:

2. Երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրության այնքան թափոններ և այնքան քանակով, որ բնությունը չի հասցնում «մարսել», այսինքն՝ չի կարողանում ինքնամաքրվել:

Այս երկու դեպքում էլ տեղի է ունենում էկոլոգիական ճգնաժամ: Այս պայմաններում հարց է առաջանում. Ի՞նչը պահպանել և ինչի՞ց պահպանել, որպեսզի տեղի չունենան բնական աղետը: Եթե անհատը ունենա էկոլոգիական կրթություն, դաստիարակություն, ապա այս հարցը ավելի հեշտ կստացվի լուծել:Աղտոտումից պահպանել հողերը, գետերը, աղբյուրները, լճերը, ծովերը, ասել է թե՝ բնությունն առհասարակ: Այս հրատապ պահանջը պետ է հասցնել յուրաքանչյուր դպրոցականի, յուրաքանչյուր անհատի գիտակցությանը: Չէ՞ որ մարդու գոյությունը պայմանավորված է բնությամբ:

Հիմնականբովանդակությունը

Եթե դպրոցականը խորապես գիտակցի, հասկանա, որ իր հարազատների, մերձավորներ, ամբողջ մարդկության կյանքը, բարօրությունը, նրանց այսօրը և վաղվա օրը կախված է բնությունից, նա կամովին կհամալրի բնությունը պահպանողների շարքը:

Սովորողների, ընդհանրապես մարդու էկոլոգիական

կուլտուրան՝ բնության նկատմամբ հոգատար

վերաբերմունքի պատասխանատվությունն է: Այն իրականություն դարձնելու համար դպրոցից, ընտանիքից, ողջ հասարակությունից պահանջվում է սովորողների հետ տանել ամենօրյա նպատակաուղղված աշխատանք:

Երեխաներին գեղեցիկը տեսնել սովորեցնելը ինքնին բարդ գործընթաց է: Նրանք մեծահասակների բառերի, տրամադրության և գործերի հանդեպ չափազանց ուշադիր և զգայուն

են, այդ պատճառով պետք է նրանց հանգեցնել աշխարհայացքային հետևությունների: Այսպիսով՝ դպրոցի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է դպրոցականի բնապահպանական գիտակցության համապատասխան մշակույթի ձևավորումը: Դպրոցում որոշակի դասաժամերի շրջանակում կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որ դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս ստեղծել բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական, թե՛ բացասական իմաստով: Փաստացի, անառարկելի օրինակներով պիտի հասկացնել սովորողներին, թե ինչու պահպանել բնությունը:

Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունք է:

Բարեգործ բնությունն այնպես է ամեն ինչի մասին հոգացել, որ դու ամենուրեք սովորելու բան ես գտնում

Բնությունը բարի է և դաժան, փրկարար է ու պատժող, առատաբաշխ է ու զրկող: Բնությունը զարմանալի է ու առեղծվածային, ներդաշնակ ու սքանչելի: Բնությունը նաև իմաստուն է, մարդու մեծ ուսուցիչն ու դաստիարակը:Յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի՝ բնությունը մարդուն պարգևում է հարստություն՝ միաժամանակ նրանից պահանջելով իր հանդեպ հոգատար վերաբերմունք…

ԳԼՈՒԽ II
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Եթե մենք ցանկանում ենք փոփոխել աշխարհը, ապա նախ պետք է փոփոխենք մարդուն, նրա որակների և արժեքների համակարգը…

Ա. Պեչչեի

Մեր օրերում հայ դպրոցը կանգնած է բարեփոխումների շեմին:Նրա առջև ծառացած են բազմաթիվ չլուծված խնդիրներ՝ ապահովել

աշակերտների պատրաստվածությունը դեպի մեծ կյանք, տալ համակողմանի և կայուն գիտելիքներ, ձևավորել գիտական աշխարհայացք, ապահովել ֆիզիկական, գեղագիտական, բարոյական և էկոլոգիական դաստիարակությունը:

Ոչ մի դասընթաց այնպես չի անդրադառնում բնակչության, բնության,մարդու և բնության միջև եղած կապերին,ինչպես աշխարհագրությունը, որի արդյունքում աշակերտը ձեռք է բերում համահողմանի գիտելիքներ և , ինչու ոչ, բարոյական անձնային որակներ հասարակության և բնության մեջ շփման ընթացքում:Աշխարհագրության դերը չափազանց մեծ է սովորողների հայրենասիրության,

գեղագիտական, մարդասիրական և բնապահպանական դաստիարակության գործում: Դպրոցական աշխարհագրությունը ունի բացառիկ կրթական և դաստիարակչչական նշանակություն: Աշխարհագրությունը, ուսումնասիրելով տնտեսական երևույթները և հասարակական գործընթացները, դրանց տարածական տեղաբաշխումը և փոխազդեցությունը,

Հիմնականբովանդակությունը

	ընդլայնում է սովորողների աշխարհայացքը, մտահորիզոնը՝ այդ երևույթներին և գործընթացներին տալով գիտական բացատրություն: Կարելի է ասել, ինչպես յուրաքանչյուր դասընթաց, այնպես էլ աշխարհագրությունը իր ավանդն ունի սովորողի կրթության, դաստիարակության, գիտական աշխարհայացքի ձևավորման գործում: Աշխարհագրության խնդիրներից կարևորագույնը աշակերտների մոտ էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումն է: Աշխարհագրության դպրոցական դասընթացը պատկերացում է տալիս բնական հարստությունների մասին, որոնք անհրաժեշտ են մարդու կենսագործունեության համար և նպատակ ունեն աշակերտների մոտ ձևավորել շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունք: Աշխարհագրության դասավանդման ընթացքում աճում է գլոբալ և լոկալ պրոբլեմները համադրելու կարողությունը, պատճառահետևանքային կապերի բացահայտումը «բնություն-մարդ» համակարգում:Կարևոր է նաև ապավինել սովորողների փորձին, զարգացնել այն, որը ձևավորվել է բնության հետ փոխհարաբերությունների ընթացքում:

Հիմնականբովանդակությունը

Փաստացի օրինակներով պետք է հասկացնել սովորողին,թե ինչու պետք է բնությունը պահպանել:Այսպես ուսուցիչը պետք է պարզաբանի, որ օրինակ մարդն առանց թթվածնի կարող է ապրել 2 րոպե, առանց ջրի՝ 3 օր: Պետք է ներկայացնել, որ վերջին տարիներին արդյունաբերական արտանետումների հետևանքով մթնոլորտի ջերմությունը բարձրացել է 0,5 աստիճանով, որի հետևանքները կարող են ողբերգական լինել:Եթե մթնոլորտի ջերմությունը շարունակի բարձրանալ, Անտարկտիդայի հզոր սառցադաշտերը կհալվեն և համաշխարհային օվկիանոսի մակարդակը կբարձրանա 66 մ-ով և մերձափնյա շատ տարածքներ կանցնեն ջրի տակ: Մեր օրերում մթնոլորտը աղտոտում են ատոմային էլեկտրոկայանների վթարները, ցինկի, կապարի, սնդիկի, մկնդեղի արդյունաբերությունը, ավտոմեքենաները և այլն:

Աշխարհագրության դասերին էկոլոգիական գիտելիքների ձևավորման պրոցեսում նպատակահարմար են օգտագործել տարբեր տիպի դասեր՝ ինտեգրված, համագործակցային,

խառը, դաս-էքսկուրսիա և այլն:Ավելի իրական միջոց է սովորողների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը զարգացնող ինքնուրույն աշխատանքները՝ ճանաչողական, ստուգողական, դերային խաղ, ինտելեկտուալ խաղ, որոնք սովորեցնում են սովորել, հիմք են դնում ինքնաճանաչողական կոմպետենտության համար:

Կարծում ենք՝ մեծ ուշադրություն պետք է դարձնել սովորողների բնապահպանական գործունեության, բնական միջավայրի պահպանությանը իրենց մասնակցությանը և ցուցաբերեն նախաձեռնություն կենդանիների փրկության, պայքարեն մաքրության համար, ստեղծեն կանաչ գոտիներ, կատարեն ծառերի տնկում:Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանը աշխարհագրության դասի շրջանակում կնպաստեն նաև գործնական աշխատանքները, էկոլոգիական պաստառների պատրաստումը, թղթերի, նկարների,

հարցաթերլիկները , որոնք սովորողների մոտ կզարգացնեն կոմպետենցիայի բաղադրիչները՝ գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը, արժեքային համակարգը:

Այս միջոցներով աշխարհագրության դասաժամերին աշակերտները սովորում են կանխատեսել բնության վրա մարդու ազդեցության հետևանքները, ինքնուրույն և խելամիտ որոշումներ կայացնել բնօգտագործման ու բնապահպանական միջոցառումների հետևանքները, հողերի ռեկուլտիվացում, լանջերի պահպանումը էրոզիայից և այլն:

Աշխարհի 200 պետությունների մեջ մեր փոքրիկ Հայաստանի Հանրապետությունը համայն հայության հայրենիքն է, քանի որ բացի մեր բուն հայրենիքից ունենք նաև սփյուռք: Այդ է պատճառը, որ հատկապես հայ աշակերտի, հայ մարդու, հայի արժեհամակարգը պետք է տարբերվի աշխարհի մյուս ժողովուրդների մտածելակերպից: Այդ պատճառով, Հայաստանի աշխարհագրության խորը իմացությունը յուրաքանչյուր հայի նույնքան անհրաժեշտ է,

որքան մայրենի լեզվի, հայրենի ժողովրդի պատմության և մշակույթի իմացությունը:

Եթե ուսուցիչը լավ է սերմանում այդ գիտելիքը, ապա այդ իմացությունը կօգնի յուրաքանչյուր աշակերտի ճիշտ գնահատել նաև մեր հայրենիքի զարգացման հեռանկարները և իրական հնարավորությունները, ճիշտ կողմնորոշվել համաշխարհային և տարածաշրջանային նշանակալի իրադարձություններում, հասկանալ մեզ ներկայացվող մարտահրավերները և պատկերացում ունենալ դրանց դիմակայելու ուղիների մասին:

Եթե ամփոփելու լինենք մեր հետազոտական աշխատանքի այս գլուխը, պետք է ասենք, որ աշխարհագրությունն է, որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողներին, ծանոթացնում է նրան տարբեր երկրների բնությանը, բնակչությանը ու տնտեսությանը: Աշխարհագրությունն է սովորողին մղում ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարափոփոխ աղխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթը ու առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն մի կողմից մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու-մոտիկ հարևանների միջև, և դրանով իսկ նպաստում է ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական, բնապահպանական կուլտուրայի

Հիմնականբովանդակությունը

ձևավորմանը:Աշակերտն աշխարհագրական գիտելիքների շնորհիվ սկսում է սիրել բնությունը, գնահատել բնության գեղեցկությունը, հոգատար ձերաբերմունք ձևավորում կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ, ճանաչում է Հայաստանի բնությունը և նրա յուրահատկությունները:Սովորողին պետք է մղել ինքնուրույն վերլուծությունների բնապահպանական հարցերի շուրջ, նա պիտի գիտակցի բնական աշխարհի սահմանափակությունը, մերժի բնության նկատմամբ սպառողական հոգեբանությունը, գիտակցի իր դերը և պատասխանատվությունը բնության պահպանման գործընթացում:

Հիմնականբովանդակությունը

Եզրակացություններ,առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտականհարցին	Բնության պահպանման հարցում ոչ մի օրենք, արգելք, տուգանք և պատիժ չեն օգնի, եթե մարդու մեջ սեր և շփման կուլտուրա չդաստիարակենք այն ամենի հանդեպ, ինչն աճում է, շնչում, թռչում,վազում, լողում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (խմբային աշխատանք, հարցաթերթիկ, էքսկուրսիա, դասղեկի ժամ, արտադասարանական միջոցառում) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:Այս ամենը հանգամանորեն հետազոտեցինք մեր աշխատանքում և եկանք հետևյալ եզրահանգումներին՝ Երեխային հարկավոր է մանկուց տալ էկոլոգիական դաստիարակություն, որպեսզի նա բնօգտագործողի իր դիրքորոշումը փոխի բնապահպանական դիրքորոշման: Էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դառնում է բնության նկատմամբ արժեքային ճիշտ կողմնորոշուների, բնապահպանական ընդունակությունների, պատասխանատու վերաբերմունքի, բնության մեջ ճիշտ վարքագծի, ունակությունների դրսևորումը և էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը:

Եթե դպրոցականը խորապես գիտակցի, հասկանա, որ իր հարազատների, մերձավորներ, ամբողջ մարդկության կյանքը, բարօրությունը, նրանց այսօրը և վաղվա օրը կախված է բնությունից, նա կամովին կհամալրի բնությունը պահպանողների շարքը:

Ոչ մի դասընթաց այնպես չի անդրադառնում բնակչության, բնության,մարդու և բնության միջև եղած կապերին,ինչպես աշխարհագրությունը, որի արդյունքում աշակերտը ձեռք է բերում համահողմանի գիտելիքներ և , ինչու ոչ, բարոյական անձնային որակներ հասարակության և բնության մեջ շփման ընթացքում:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել սովորողների բնապահպանական գործունեության, բնական միջավայրի պահպանությանը իրենց մասնակցությանը և ցուցաբերեն նախաձեռնություն կենդանիների փրկության, պայքարեն մաքրության համար, ստեղծեն կանաչ գոտիներ, կատարեն ծառերի տնկում:

Գտնվելով հասարակական ու բնական գիտությունների շփման գոտում ՝ աշխարհագրությունը զինված է անհրաժեշտ, հզոր ռեսուրսներով, որոնք անհրաժեշտ են սովորողների մոտ էկոլոգիական գիտակցության ձևավորման համար:

	Բնությանը հասկանալը, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքը պետք է մարդկային կյանքի գլխավոր գիտությունը դառնա մոր ծնկների վրա երեխայի նստելուց մինչև կյանքին հրաժեշտի հայացքը: Միայն այս պայմաններում մենք կարող ենք բնության հետ հաշտ ապրել…
Այլտեղեկատվություն	

Օգտագործվածգրականությանցանկ

Տեսական գրականություն

1. Ասատրյան Լ.,Թ., Սարգսյան Ա.Ս., երեխաների էկոլոգիական կրթության տեսություն, Երևան, 2005,24 էջ
2. Ամիրջանյան Յ.,Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան,2005,455էջ
3. Հանրակրթական հիմնական դպրոցի «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի չափորոշիչներ և ղրագրեր, Երևան, 2008
4. Մարուխյան Լ., Հովսեփյան Ս., Անձի էկոլոգիական կուլտուրա, Երևան, 2006, էջ 45
5. Մելքումյան Լ. , Էկոլոգիայի հիմունքներ, Երևան, 2008, 288 էջ
6. Ռ.Մարուխյան, Ա.Հովսեփյան, Անձիէկոլոգիականկուլտուրա:ուսումնականձեռնարկ

Համացանցային աղբյուրներ

1. https://aspu.am/website/images/files/Tovmasyan%20Armine.pdf
2. https://faolex.fao.org/docs/pdf/arm209948.pdf
3. https://www.hamakarg.am/?p=1490

Հավելվածն
եր